տանդն է եղել։ Մի այլ տեղ վարժապետը վա-
զում է հարսների ետևից, կամ երկու գիւղա-
ցոց կռուացնում է, որ նորանց համար գան-
գատի տեղիք տայ և ինքը դատարանին խնդիրք
գրի նոցա համար, կամ դատում է Քրիստոսի
Աստուածութեան, սուրբ Կուսի յղութեան և
անարատութեան վրայ*)։ Բայց գիւղացին այս
ամենին չի կարող դիմանալ. նա իրաւամբ իւր
վարժապետից բարոյական բարձր օրինակներ է
սպասում, բայց այդ սպասելիքը չը գտնելով,
գանակոծելով դուրս է գցում «ֆարմասիօն մո-
լորեցուցչին»։ Իսկ մեծ ուսումնարաններում,
ուր մի քանի վարժապետներ խմբովին են լինում
կռիւը, ինտրիգները անվերջանալի են. շատ տեղ
ժողովուրդն է նրանց հաշտեցնում։ Ամէն մէկ
վարժապետը, տևողական և մեծ ռոճիկ ստա-
նալու համար, աշխատում է ընկերից բարձր
լինել, համարումն ունենալ, դրա համար էլ նա
ամեն կեղտոտ միջոցներ գործ է դնում ոտի
տակ տալու ընկերի պատիւը, թէ աշակերտների
և թէ ժողովրդի առաջ։

Մենք չենք մեղադրում գիւղական վարժա-

---

*) Ծանօթ. Այս ընդհանուր երեւոյթը առանց բա-
ցառութիւնների չէ. կան վարժապետներ, որոնք խճմռան-
քով են կատարում իւրեանց պարտքը եւ դաստան
պաշտօնը։